## 80. ՕՂՏԸԵՆ ՊԱՐ ԿՅԱԼԸ

*Օղտըեն նան էշին տարը էնքան պինըցնում ա, վըեր հալա ինդյում ըն։ Կլոխ ըն յոր օնում քյինամ, հըռանում։ Ուրանց կըլխու վըեր մին քանի ամըեկ ապրում ըն, քյուքանում ըն, ըսկսում ըստըեղ-ընդըեղ շոռ կյալը։*

*Մին օր էլ էշը վըեր լավ ըրածում ա, քյեփը քյուքըցնում, օղտըեն ասում ա.—Երք ասըեկըս կյամ ա։ Օղտը թա՝ սուս ըրա, ծենըտ կըտրըե, սանըտ ըսկընենական ըն, կյան մըեզ էլլա տանըեն պեռնըեն։ Էշը թա՝ չէ՛, վըեր չէ՛, երք ասըեկըս կյամ ա։ Ասում ա, ըսկսում զոռալը։ Վըեր էրկան զոռում ա, տահանց տարը էշին սանը ըսկանում ա, կյամ ճոխտըեն էլ տանում նորըմինան պինըցնում, սուրթան անա յել լափ հալա քցում։*

*Էտ հալա ինդյած վըխտըրնըեն օղտը նան էշը մեհետ հըղենի բիրանգի քյինամ ին։ Մին կյետ ա պըտահում։ Էշն էնքան ա ինում թուլացած, վըեր կարում չի կյետավն անց կենա։ Օղտը էշին ասում ա.—Եք քեղ շիլակըեմ, անց կըցընեմ։ Էշը թա՝ կարըել չըս։ Օղտը թա՝ պեն չօնըես, եք եր իլ շելակըս։ Էշը քյինամ ա օղտըեն շելակը եր ինում, օղտը կյետավն անց ա կըցնում։ Կածանը մին պեցուր քըերծավ ար անց կենում։ Օղտը էշին շիլակած տանում ա, վըեր հըսնում ա քըերծըեն պառկը, ասում ա.—Պար կյալըս կյամ ա։ Էշը թա՝ չէ՛, չէ՛, թող ըստըեղավ անց կենանք, նոր։ Օղտը թա՝ չէ՛, վըեր չէ՛, պար կյալըս կյամ ա, պիտի պար կյամ։ Համ ասում ա, համ ըսկսում պար կյալը, ճոխտը բիրանգի թուլ ըն ինում, ինդյում կյետը։*